ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«5» մայիսի 2016թ. N 30-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 4-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1204-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված 3-րդ և 4-րդ կետերը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2015 թվականի հունվարի 30-ի «Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ նշանակելու և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի հուլիսի 16-ի N32-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 4-Ա հրամանի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Տեղեկատվության ազատության ապահովման համար պատասխանատու անձ նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Սոֆի Սիմոնյանին՝ վերջինիս վերապահելով հետևյալ պարտականությունները.

1) ապահովում է տեղեկատվության ազատության ապահովման ոլորտում տեղեկատվություն տնօրինողի պարտականությունների իրականացումը,

2) տեղեկություն փնտրողին մատչելի ձևով բացատրում է տեղեկության տրամադրման կարգը, պայմանները և ձևերը,

3) մշակում է ստացված հարցումների վիճակագրական և ամփոփ տվյալները:»

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ